

Բայց այժմ խանգարեալք և սեւացեալք՝ հազիւ թէ երևին: Գոն եւ խորանք պատարագաց . . . եւ գրեանք գրեալ դաղմատերէն գրով . . . երկայնութիւն կգ. (63) ոտ է և լայնութիւն խ. (40) ոտք» (Հան. էջ 264-5):

ԺԲ. դարու ուղեգիրներ կ'աւելցնեն հետեւեալը. Ս. Կուսի եկեղեցիին մօտ այրին վրայ շինուած էր ընդարձակ եկեղեցի մը, ուր կը գտնուէր սեղան մը. նոյն եկեղեցիէն կ'իջնէին ստորերկրեայ այլ մը, ուր Յիսուսի ըմբռնման, մատնութեան և նստարաններու նշանաւոր այրն էր, տակաւին հոն ցոյց կուտային այն չորս տեղերը՝ ուր երկոտասանք երեք երեք պառկած կը ննջէին: Հոն էր որ Յիսուս երեք անգամ պարտէզը թողլով եկաւ ըսելու աշակերտներուն. «հսկեցէք և աղօթեցէք», հոն էր որ Ան մատնիչին առջև ելաւ և մատնուեցաւ: Այրին պատերուն վրայ նկարուած որմանկարներ կը ներկայացնէին այս զանազան տեսարանները: Այրին ձախ անկեան ժայռին վրայ տեսնուած հինգ կամ վեց ծակերը ռամիկին աչքերուն կը պատկերացնեն Քրիստոսի մատներուն տեղը ուր պատին վրայ տպաւորուած էր իր ըմբռնման ժամանակ (P. P. V. A. հատ. Բ. էջ 313): Ուրիշ աւանդութեան մը համաձայն, Առաքելոց այրն է այն տեղը ուր Քրիստոս արիւն քրտնեցաւ. «Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայլակս՝ ոլուն ոլուն հեղեալ յերկիր» (Ղուկ. ԻԲ. 44): Առաքելոց աշակերտ Հեզեսիպպոս (+180) յառաջ կը բերէ աւանդութիւն մը, ըստ որում Քրիստոսի նոյն տեղւոյն վրայ իբր քրտունք թափած արեան կայլակներէն յառաջ եկած է տունկ մը, որուն տերեւներուն վրայ գրուած էր այս խօսքը. «Ո՛վ մահ որքան դառն է քու յիշատակը» (Մար. Ա. հատ. էջ 304-308):